ԲԱՆԱՁԵՎ № 20-29,158

ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎ, ՈՐՈՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԽՆԴՐՎՈՒՄ Է ՀԱՄԱԽՄԲԵԼ 2020 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻՈՒՄ ՆՈՒՅՆ ՕՐՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՄԱՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ; ԱՐՏՈՆԵԼ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՀԱՇՎԱՐԿԵԼ ՆՇՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ; ԵՎ ՄԻՋՆՈՐԴԵԼ, ՈՐ ԱՅԴ ՔԱՈՒՆԹԻԻ ՀԱՇՎԱՌՈՂ-ԳՐԱՆՑՈՂԻՆ/ՔԱՈՒՆԹԻԻ ԳՈՐԾԱՎԱՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԻ ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻՆ ՄԱՏՈՒՑԵԼ ՆՇՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԸՍՏ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԲԱԺԻՆ 10403-Ի

ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՄԱՐՈՒՄ Է, ՈՐ.

1. Բըրբենք քաղաքի Խորհուրդը (այսուհետ՝ Բըրբենքի Քաղաքային խորհուրդ) ցանկանում է Քաղաքային ընդհանուր ընտրություն հրավիրել 2020 թ. նոյեմբերի 3-ին՝ Բըրբենքի Քաղաքային խորհրդի՝ պաշտոնավարման լիարժեք քառամյա (4) ժամկետով երկու (2) անդամի, ինչպես նաև ընթացիկ պաշտոնավարման ժամկետը 2022 թ. դեկտեմբերին ավարտող Քաղաքի Գանձապահ ընտրելու նպատակով:

2. Ցանկալի է, որ 2020 թ. նոյեմբերի 3-ին առաջարկվող Քաղաքային ընդհանուր ընտրությունները համատեղվեն նույն օրը Լոս Անջելես Քաունթիում կայանալիք Համանահանգային ընդհանուր ընտրությունների հետ, ըստ Կալիֆորնիայի Ընտրական օրենսգրքի Բաժին 10403-ով նախատեսված իրավասության; և որ Քաղաքի սահմաններում ընտրական տեղամասերը, քվեարկության կենտրոններն ու ընտրական հանձնաժողովների պաշտոնատարները նույնը լինեն, և որ Լոս Անջելես քաունթիի Ընտրությունների վարչությունը հաշվարկի Քաղաքային ընդհանուր ընտրությունների արդյունքներն ու որ այդ ընտրություններն անցկացվեն այնպես, որ կարծես միայն մեկ ընտրություն է անցկացվում:

ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Լոս Անջելես քաունթիի Հոգաբարձուների խորհրդին սույնով խոնարհաբար

խնդրվում է կարգադրել համախմբել նշված Քաղաքային ընդհանուր ընտրությունները, որոնք նախատեսված է անցկացնել 2020 թ. նոյեմբերի 3-ին, Համանահանգային ընդհանուր ընտրությունների հետ, որոնց անցնելու են Լոս Անջելես քաունթիում 2020 թ. նոյեմբերի 3-ին:

2. Կալիֆորնիայի Ընտրական օրենսգրքի Բաժին 10403-ի համաձայն Լոս Անջելես քաունթիի Հոգաբարձուների խորհրդին (Հոգաբարձուների խորհուրդ) սույնով խոնարհաբար խնդրվում է հավանություն տալ ու համաձայնել այդ Քաղաքային ընդհանուր ընտրությունները 2020 թ. նոյեմբերի 3-ին, երեքշաբթի կայանալիք այդ Համանահանգային ընդհանուր ընտրությունների հետ համախմբելուն, Բըրբենքի Քաղաքային խորհրդի՝ պաշտոնավարման լիարժեք քառամյա (4) ժամկետով երկու (2) անդամի, ինչպես նաև ընթացիկ պաշտոնավարման ժամկետը 2022 թ. դեկտեմբերին ավարտող Քաղաքի Գանձապահ ընտրելու նպատակով, և որ Քաղաքային ընդհանուր ընտրությունների անցկացման համար անհրաժեշտ ընտրական ծառայությունները տրամադրվեն Քաունթիի Ընտրությունների վարչության կողմից: Քվեարկության պահանջն այն է, որ այս կամ այն պաշտոնի համար ձայների ամենամեծ քանակը ստացած թեկնածուն ընտրվի տվյալ պաշտոնին:

3. Բըրբենքի Քաղաքային խորհուրդն ընդունում է, որ Համախմբված քաղաքային ընտրություններն անցկացվելու են Ընտրական օրենսգրքի Բաժին 10418-ով սահմանված կարգով: Քաունթիի Ընտրությունների վարչությունը սույնով լիազորվում է, և նրան խոնարհաբար խնդրանք է ներկայացվում՝ հաշվարկել նշված Քաղաքային ընդհանուր ընտրությունների արդյունքները: Համախմբված քաղաքային ընդհանուր ընտրությունները բոլոր առումներով կանցկացվեն այնպես, կարծես դրանք մեկ ընտրություն են, և քվեաթերթիկի միայն մեկ ձև կօգտագործի:

4. Հոգաբարձուների խորհրդին խնդրվում է անհրաժեշտ ցուցումներ տալ Քաունթիի Ընտրությունների վարչությանը՝ բոլոր հնարավոր քայլերը ձեռնարկել համախմբված ընտրությունների անցկացման համար, և Քաղաքի Գործավարը, իբրև Բըրբենք քաղաքի Ընտրությունների պատասխանատու, լիազորվում և հրահանգվում է աշխատել Քաունթիի Ընտրությունների վարչության հետ՝ ըստ անհրաժեշտության և հավուր պատշաճի:

5. Լոս Անջելես քաունթիի Հոգաբարձուների խորհուրդը սույնով լիազորվում է, ու նրանից խոնարհաբար հայցվում, որ այն իր հերթին լիազորի և արտոնի Լոս Անջելես քաունթիի Հաշվառող-գրանցողին/Քաունթիի Գործավարին առ հետևյալն.

ա) Տպել ու տրամադրել Բըրբենք քաղաքի նշված Քաղաքային

ընդհանուր ընտրությունների քվեաթերթիկները;

բ) Քաղաքի քվեաթերթիկների օրինակներն ու թեկնածուների որակավորման հայտարարությունները փոստով ուղարկել Բըրբենք քաղաքի Ընտրողներին (Էլեկտորներ)՝ այն նույն նյութերի հետ մեկտեղ, որոնք առաքվելու են Լոս Անջելես քաունթիում կայանալիք Համանահանգային ընդհանուր ընտրությունների ընտրողներին;

գ) Իրականացնել այնպիսի այլ ծառայություններ, որոնք անհրաժեշտ կլինի իրականացնել Բըրբենք քաղաքի նշված Քաղաքային ընդհանուր ընտրությունները Լոս Անջելես քաունթիում անցկացվելիք այդ Համանահանգային ընդհանուր ընտրությունների հետ համախմբելու և դրան մեկտեղ անցկացնելու նպատակով։

6. Լոս Անջելես քաունթիի կազմակերպած վերոհիշյալ համանահանգային ընտրությունների համար նախատեսված ընտրական տեղամասերը, քվեարկության կենտրոնները, քվեարկության ժամերն ու ընտրական հանձնաժողովների պաշտոնյաների անունները՝ այնպես, ինչպես դրանք ստեղծվել, նշանակվել ու անվանվել են Կալիֆորնիայի Լոս Անջելես Քաունթիի Հոգաբարձուների խորհրդի կողմից համանահանգային կարգով կազմակերպվող այդ ընտրությունների նպատակով, և համաձայն նշված Քաունթիի կողմից կազմակերպվող համանահանգային ընտրություններին վերաբերող որևէ այնպիսի ծանուցագրի, որը հրապարակվել է, կամ պետք է հրապարակվի Լոս Անջելես քաունթիի կողմից, սույնով ստեղծվում, նշանակվում և անվանվում են, համապատասխանաբար, իբրև այս Հանրագումար քաղաքային ընտրությունների ընտրական տեղամասեր, քվեարկության կենտրոններ, քվեարկության ժամեր, և ընտրական պաշտոնյաներ։ Այս Քաղաքային ընդհանուր ընտրություններին կօգտագործվի միայն մեկ քվեաթերթիկ՝ նշված Քաունթիի կողմից կազմակերպված համանահանգային ընտրություններում օգտագործվող քվեաթերթիկը, և այդ ընտրությունները կանցկացվեն բոլոր առումներով այնպես, կարծես դրանք մեկ ընտրություն են հանդիսանում։

7. Ինչպես պահանջվում է, ընտրությունների քվեարկության կենտրոնները բաց կլինեն քվեարկության համար սահմանված ժամանակահատվածում, ըստ Կալիֆորնիայի Ընտրական օրենսգրքի Բաժիններ 4007-ի և 14401-ի։

8. Բըրբենք քաղաքը հասկանում է, որ այս համախմբման արդյունքում Քաունթին հավելյալ ծախսեր կկրի, և համաձայնում է փոխհատուցել Քաունթիի ցանկացած ծախս։

9. Քաղաքի Գործավարը կվավերացնի այս Բանաձևի ընդունումն ու Բանաձևի վավերացված պատճենը կներկայացնի Լոս Անջելես Քաունթիի Հոգաբարձուների խորհրդին՝ Հոգաբարձուների խորհրդին ու Լոս Անջելես քաունթիի Հաշվառող-գրանցողին/Քաունթիի Գործավարին փոխանցելով նաև դրա էլեկտրոնային տարբերակը։

ԱՆՑԵԼ և ԸՆԴՈՒՆՎԵԼ Է 2020 թ. հունիսի 23-ին։

u/Շերոն Սփրինգեր
Շերոն Սփրինգեր (Sharon Springer)
Քաղաքապետ

Ընդունված է ըստ կարգի.
Քաղաքի Փաստաբանի գրասենյակ

Վկայում եմ.

u/Զիզեթ Մուլինզ
Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC
Քաղաքի գործավար

Ում կողմից. u/Էյմի Ալբանո
Էյմի Ալբանո (Amy Albano)
Քաղաքի Փաստաբան

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳ)
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻ) սս.
ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔ)

Ես, Բըրբենք քաղաքի Գործավար Զիզեթ Մուլինզս, MMC, սույնով վկայում եմ, որ վերը նշված Բանաձևը պատշաճ և կանոնավոր կերպով անցել ու ընդունվել է Բըրբենք քաղաքի Քաղաքային խորհրդի կողմից, 2020 թ. հունիսի 23-ին գումարված կանոնավոր նիստին, ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

ԱՅՈ. Ֆրութոս (Frutos), Գեբլ-Լադի (Gabel-Luddy), Մըրֆի (Murphy), Թալամանթես (Talamantes) և Սփրինգեր (Springer)։

ՈՉ. Չկա։

ԲԱՑԱԿԱ. Չկա։

u/Զիզեթ Մուլինզ
Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC, Քաղաքի Գործավար